

լիներ, արժանի էր զայն ստանալու և կը-  
ստանար, :

Հանգիստ հոգով սպասեց Գրանկլին յե-  
տին ըստեին և մինչև վերջին օրը միտքը  
պարզ պահեց: 1790թ. ապրիլի 17, երեկո-  
յեան 11 ժամին մահը փակեց նորա աչքը:

Կորա թաղման պէս հանդիսաւոր թա-  
ղումն Ամերիկան դեռ տեսած չէր: Գիլա-  
տելֆիայի բնակիչները սկոյ հանդերձ հա-  
գան, զանգակները տրտում հնչեցին, տա-  
նիքներէն սև գրօշակներ պարզուեցան,  
լրագիրները սև շրջանակ զգեցան և կոնդ-  
րեսոր բոլոր միացեալ նահանգներու վրայ  
երկու ամսուայ սուդ գրաւ:

Միւս երկիրներն ես ի խորոց սրտէ  
տրտմեցան նորա մահուան բօթը լսելով: Գրանսիայի օրէնսդրական ժողովի մէջ այս-  
պիսի արտայայտութիւն տուաւ Միրարօն  
ընդհանուր վշտին.

“Գրանկլին մեռաւ: (Խորին լոռութիւն  
ժողովի մէջ: ) Այն ողին, որ Ամերիկա-  
յին ազատութիւն տուաւ և ամբողջ Եւ-  
րոպայի վրայ լուսոյ հոսանք կը յորդէր,  
Վստուածութեան գիրկը վերադարձաւ:

Կոնդրեսոր Գրանկլինի համար երկու  
ամսուայ սուդ կարգեց ամեն միացեալ նա-  
հանգներու մէջ, և այդպիսով Ամերիկան  
վճարեց հիացման ու պատուոյ պարագը  
իր ազատ սահմանադրութեան հիմնադիր-  
ներէն մէկին:

Ով օրէնսդիրը, արդեօք ձեզ ես ար-  
ժանի չէ, որ միանաք այս կրօնական արար-  
մունքին և մարդկային իրաւունքներուն  
ու նոցա իշխանութիւնն աշխարհիս մէջ  
տարածող փիլիսոփային այսօր ընծայ-  
ւած փառարանութեանը ի տես աշխար-  
մանակացիք:

Այս մահկանացուին, որն որ յօդուտ  
մարդկութեան՝ իր վսեմ հողոյ զօրու-  
թեամբ երկինք ու երկիր ըմբռնելով՝ շան-  
թըն ու բռնակալութիւնը սանձահարել  
կրցաւ, հեթանոսական հին աշխարհը բա-  
զիններ կը կանգնէր անշուշտ:

Փիլիսոփայութեան և ազատութեան  
համար երբ և իցէ ապրող ամենամեծ մար-  
դիկներէն մէկին լուսաւորեալ և ազատ  
Եւրոպան պարաւաւոր է իր վեշտն արտա-  
յայտելու և անունը յիշասակելու :

Ուստի կառաջարկեմ, որ ազգային ժո-  
ղովը վճիռ հաստատէ երեք օրուայ սուդ  
դնելու Ռենիամին Գրանկլինի համար, :

Միրարօյի առաջարկութիւնն ընդու-  
նուեցաւ:

Երդ մէք ես կանգնած ենք մտքով ան-  
մահ ննջեցելոյ ածիւնին առջև: Թող մեր  
սիրան երախտագիտութեամբ ու հիաց-  
մամբ լցուի նորա վրայ նայելով և թող  
նա օրհնէ զմեզ իր գերեզմանէն:

Թարգմանեաց ի Գերմաներէնէ

Փ. Ա. Աբրամեան:

ԱՐՑԱԽԻ ՆԱՇԱԽԱԳԻ ԶՐՈՒԲԵՐԴԻ ԳԵԼԵՍԻՐԸ,

Հին Հայաստանի վեշտասան նահան-  
գաց մէջ Արարատեան Ճոխազարդ և ար-  
քունական նահանգէն յետոյ իրաւամբ ա-  
կանաւոր է Արցախը, ոչ միայն իւր բերդի  
դաշտաձեւ հովիաներով, իւր յորդաջուր  
ծաղկածին լեռներով, իւր բարձրաբերձ  
գարեանգներով, իւր թաւաժուրի մա-  
ցառապատ թանձրախիտ անտառներով և  
որսոյ զանազան կենդանիներով, այլ և  
իւր սքանչելի հնութեամբ, իւր երկնա-  
կամար վանօրէիւք և մեծակառոյց բերդե-

րով, որոց մէջ մեր քաջազուն նախնիք ամբայած թշնամեղյն դռո արշաւանաց կը իմազրէին և իրենց ազատութիւնը տահաւին մինչև մեր դարը կողաշատանէին։ Երբ որ Հայաստանի ազատութեան քաղցըր արեն քանի հարիւր տարիէ ի վեր իւր հորիզոնը մասած միւս նահանգաց մէջ, ամեն տեղ թշնամեղյն մահահրաւելը բազուկը կտարածուէր, ամեն քաղաքաց և լերանց վերայ բարբարոսաց արիւնազանդ դրոշակն կծածանէր, և Հայաստանի անմեղ զուտիները նոյն բարբարոսաց բանութեան խաւարապատ տարատրուներէն փախահամբ գտղթելով ի ըստ անդորրութեան աղ և այլ աշխարհաց կդիմէին, այս նահանգն էր միայն, որ իւր դիւցազն նահատակաց հզօր դիմակալութեամբ բաղմաթիւ Հայկազանց պատսպարան գտնուեցաւ, սորա թանձրախիտ մայրէք հարսծական Հայերու ապաւէն դարձաւ, սուս դժուարանասոյց ստորոտները նոցա ապաստանարան եղաւ, մեր քաջազուն իշխանաց բերդերու պարիսպներէն տակաւին յուսոյ և ակնկալութեան երիներանդ ծխածան կփայթէր, նոցա հայրենավառ սրբոյն շողիւն ամուր լերանց ծայրերէն թրշնամոյն աչքը կշլացնէր, մինչև որ Ոռուաց առաստագութ տէրութեան աւետարք արձիւն եկաւ հանգեաւ այս նահանգիս վրայ, Հայկազանց խսպան ազատութիւն շնորհեց և թշնամեղյն յարձակման վախճան տուաւ։

Եյս նահանգը մեր քերթողահայրն իւր աշխարհազրութեան մէջ տասն երկու գաւառ կբաժանէ, իսկ այժմեան քաղաքական բաժանմամբ և նորոգ անուանակութիւնը վեց գաւառի վերածուածէ։

Մենք յօդուածովս միւս գաւառաց սոսրազրութիւնը ուրիշ յարմար ժամանակի կթողունք, միայն մի բանաւոր և զգալի պատճառաւ նահանգիս Մեծկուանք այն է Զրաբերդ գաւառի նկարագիրը կը դնենք այս տեղ։

Եյս գաւառիս սահմանն յարեւելից Քարդարասան գաւառն է, յարեւմտից վերին Խաչէն՝ այժմ Վեալբաջար, հարաւից՝ Կրմիտորթ, իսկ հիւսիսից Մեծերանք գաւառը այն է ներքին Խաչէնք։ Գաւառիս դիրք ըստ մեծի մասին լեռնային է, վասն զի կանկանի Արցախու աղխաղխեալ լերանց սպառուածոյ բազկաց վերայ, ուստի և ունի շատ զուարձալի խորածարեր և թանձրախիտ անտառներ, որոնք էրէվայրեօք լիքն են, այն է եղջերու, այծեամն, եղն, վարազ, ցիռ, գաղններէն գայլ, արծ, վազր, իսկ թրաչուններէն շատ յաճախ են, ինչպէս նահանգիս միւս գաւառները, նոյնպէս և այս տեղ փասխան, կաքաւ են, Ունի և այս գաւառ բարերեր գաշտեր, որոնց մէջ կը մշակուին ցորեան, գարի, կտաւհատ, ըըրինձ, բամբակ և ուրիշ բոյսեր և արմակքներ։ Եյս գաւառից կանցնի Դրաբաւական այժմ Ճարթառ սրբնթաց գեան, որ Մռաւու լերանց կարկաջասահ յորդաբուղիս աղբիւրներէն սկզբնաւորելով և զանազան առուակներ բաժանելով, գաւառին դաշտորայքը և անդաստանները ուողանելին զինի կանցնի Ուտէացւոց աշխարհ և Պարտաւ քաղաքի աւերախաց մօտ Առը դետը կթափի։ Եյս գաւառը բաղկացած է երեսուն և վեց զիւղօրեից, որոց մերազնեայ բնակչաց թիւն հազար երկը հարիւրի կհասնի, որոնցից ոմանք ուողանելին զինի կանցնի Ուտէացւոց աշխարհ և Պարտաւ քաղաքի աւերախաց մօտ Առը դետը կթափի։ Եյս գաւառը բաղկացած է երեսուն և վեց զիւղօրեից, որոց մերազնեայ բնակչաց թիւն հազար երկը հարիւրի կհասնի, որոնցից ոմանք 58

երկրագործութեամբ և կեսք այդեզործութեամբ կպարապին։ Այս գիւղօրէից մէջ առևնէն երեւելի է Առուսապատ այգաւետ զիւղն, որ ունի հարիւր յիսուն տուն Հայկաղն բնակիչ, որոնք ունին մի սարշաշէն եկեղեցի, չորս սեան վրայ կառուցած ի թուին Հայոց ՈՌԴԼԵ. սա ունի իւր առաջ ընդարձակ դաշտ, ուր կմշակուին շատ սեսակ արմտիքներ, բայց իւր շրջակայ լեռներն ամառնային ժամանակները տեղւոյս բնակիչները տապախառն տօթով չարաչար կվշտացնեն։ Կաև յըշատակութեան արժանի է Հայարնակ Հայթերք ընդարձակ գիւղն Յարթառ գետոյ ափի մօտ շինուած, որ ունի փոքր սագաշէն եկեղեցի, որոյ մէջն է Հայթերք անուանեալ սուրբ Կշան մեր Ազգային պատմագիրներէն յիշտակուած։ Այս գիւղը Հասան - Գալալեանց իշխանազուն տոհմին ոստանիկ էր։

Ասկայն մի անկեղծ հայրենասիրի աչք չի կարող առանց յարտասուս ցնդելոյ և առանց հառաջանաց անցնելու գաւառիս Վայրաքաղաք կոչուած քաղաքի աւերակներէն, վասն զի նորա մէջ կտեսնէ բաց ի աւերակ մեծամեծ տներէ և ապարաններէ նաև քաջազոր Մելիք Ադամ<sup>(\*)</sup>) իշխանին չքնաղակերտ պալատն, որոյ չորս կողմը արուարձան մ'է պալատին պահպանութեան համար։

(\*) Այս հչուակաւոր Մելիքն, Մուխանք, այժմ Մուղուկ գաւառէն Զբարեր եկած, նախ Զերմուկ կոչուած բերդին մէջ իւր բնակութիւն հաստատեց. իւ հատիք - Շահի, Սամանեան Քիւֆիւրի օղլու մեծ զօրապետին նետ տղաւած պատերազմաց մէջ մեծամեծ քաջութիւններ ցոյց տալէն յետոյ, Շահէն ոչ

Այս գաւառին վանքերէն երեւելի է Երից Մանկանց ուխտն հոչակաւոր Մոռաւութերին բազկաց վերայ, Հայոց ՈՌԴԼԵ թուականին Աղուանից Արմեօն Կաթողիկոսին և իւր եղբօր Խոնասիոս վարդապետին ձեռօք, ինչպէս որ սորա եկեղեցւոյ արձանագրութիւններէն ևս յայտնի է, զորս Արբաղան Արգիս Եղք Եպիսկոպոսն Հասան - Գալալեանց, իւր սառւգապատում Ճանապարհորդութեան առաջին հատորոյ մէջ կօրինակէ, չորս սեանց վերայ սպիտակ անշուռք քարերով շինուած, որոյ շուրջ կգտնուին նաև միաբանաց քարուկիր սենեակներ։ Այս վանքի արեւելեան կողմն է Գլուխղ կամ Գլբերդ կամ Չարբերդ կամ Գերմուկ կոչուած անառիկ ամրոցն անմատչելի միապաղ քարի վերայ շինուած, տեղի բնակութեան յիշեալ Մելիք Ադամայ և նորա քաջութեանց հանդիսարան։ որ ունի միայն մէկ դուռն թարթառ գետոյ կողմէն։ Այս ամրոց շատ անգամ մեր ազգին երախտաւոր գտնուեցաւ՝ թշնամեաց ասպատիկութենէն փախուցած անպատճապար Հայերուն պատրսպարան և տեղի ապաստանի լինելով. ինչպէս որ հաւանական է, այս բերդի անունէն գաւառը ևս Գլարերդ անուն ստացաւ։

Այս համառօտ ստորագրութեան առթով նաև գաւառիս Հայ հասարակու-

միայն Թանկապին պարզեներ, այլ և Սուլթանութեան աստիճան ստանալով, հրամայեցաւ եւ իրեն կրել Ալլահղութի մականուն. որոյ սերունդը եւս մեծամեծ քաջութեամբ իրենց նախնեաց անունը փառաւրեցին եւ անօդնական շատ հայկազմաց ազատարար հանդիսացան։

թեան ուսումնասիրական և բարեպաշտական զգացմանց գաղափար մը տալու համար կժանուցանեմ որ, ժամանակէ ի վեր գաւառէս մէկ քանի գաղթականներ եկած Ծուշի բերդաքաղաքի մէջ բնակութիւն հաստատած են, որոնք քանի տարի առաջ հասարակաց օգտին գործածելու համար իրենց մէջ 150 ոռորդի հաւաքած էին, և զայն շահեցնել տալով 530 մանեթի դրամագլուխ կազմած էին, զոր մօտերս ինքնայրդոր սիրով բերելով ընծայեցին կէսը Արարագու Ըղգային Հոգևոր դրաբոցին, իսկ միւս կէսը Գրանձասարու վանից:

Մեր ազգայիններէն շատերն արդէն լաւ զգացած են, որ արդի գարուն մեր բարոյական փրկութեան և լուսաւորութեան ամուր ապատանարանք Խկեղեցին և դպրոցներն են. ուստի մերազնեայք ո՞չ չափայիս երկու կենսարեր երկնային ծնողաց նիւթեական սնունդ մատակարարելու փոյթաւոնին, այնչափ ևս իրենք բարոյական և մտաւոր սննդեամբ կզարդանան, երջանիկ քաղաքավարութեամբ և շքեղ պատուով իրենց ազգային դոյութիւնը կպահեն աշխարհիս վրայ: Ուրեմն մեծաց շնորհակալութեանց արժանի են Քըարերդցիք, որ իրենց այս երկու վեհավայր տաճարաց պայծառութեան և լուսոյ նիւթ մատուցանելով՝ իրենց ապագայ սերունդը լուսաւորելու իրենք ևս մասնակից գտնուեցան: Խրանի թէ սոցա գովելի նուիրատուութիւնն և զգացմունքն արձագանք դանէր բոլոր Հայկազանց սրտերի մէջ, ի ձեռն հրատարակութեան պատուական Երարտագաղոյդ:

Ի ձուցէ:

Ա. Պատուական.

## Բ Ա Ն Ա Ս Թ Ա Կ Ա Ն

ՈՐՏԵՎ ԵՆ ՄԱՅՐԵՐԸ.

Սմբրիկայի մանկավարժական լաւագոյն օրագիրներից մին ուշաղըութեան արժանի գատողութիւններ է անում կանանց մասին: Աշխարհիս մէջ ամեն ազգեցութիւններից ամենաահզօր, ամենաակեղական և ամենաաբարոյական անշնուշտ մօր ազգեցութիւնն պիտի համարվի: Խրբ չկայ մօր ազգեցութիւն, ուրեմն աշխարհիս մէջ ոչինչ չէ կարօղ նորան փոխարիննել: Արտաքին սովորութիւններն կարօղ են մանկավարժից հաղորդվել մանուկին, բայց բարոյականութեան դասերը կարօղ են արմատացած լինել մանուկի մէջ միմայն մօր ձեռով:

Մատարական ընդունակութիւնների մշակութիւնը գեռ ևս բարոյական ոյժ չէ տալիս: Բարոյական ոյժը բնաւորութենից է առաջանում: Մարդի բնաւորութիւնը կազմվումէ ոչ թէ գիտեական տեղեկութիւնների միջնորդութեամբ, այլ սէրի, ներշնչութեան և այն կատարեալատվերի միջնորդութեամբ, որ մարդս այնչափ փայփայումէ և սիրումէ: Խրենայի բնազդմունքը (ինստինկտներ) սովորութիւններ են դառնում շատ առաջ քան թէ տրամաբանական մտախոհութիւնը կուսուցանէ նորան բարին չարից որոշել: Ոսվորութիւնները բնաւորութեան հիմներն են, իսկ լաւ սովորութիւնների զարգացումն մօր առանձնական պարագմունք պիտի լինի: Աւղղակի նորա պարտաւորութիւնն է մանուկներին սէր ազգել գէպ ի վայելում, գէպ ի գեղեցիկն, գէպ